

թեան յարմարեցնել աշխատելով, այլ ինքներս պէտք է սովորենք նրանից և մեր աշխարհային գործերն ու ձգտումները նրան յարմարեցնենք։ Նա մեզ սովորեցնում է, թէ մարդկութեան բուն աշխատանքն ինչ պէտք է լինի, և մենք փոխանակ նորա տեղ մեր քաղաքակրթութիւնը դնելու, պէտք է հետամուտ լինենք, որ այդ աշխատանքը գլխաւոր և կենտրոնական տեղը բռնէ մեր քաղաքակրթական յառաջադիմութեան մէջ։ «Քրիստոսի յայտնութիւնը», ասում է մեր ժամանակի մի պատմաբան, «ամէն բարոյական քաղաքակրթութեան միակ հիմքն է, և նայելով թէ ինչ չափով է ազգեցութիւն գործում այդ յայտնութիւնը՝ ըստ այնմ և կզօրանայ կամ կթուլանայ ազգերի բարոյական քաղաքակրթութիւնը»։

Ա. Վ.



Խճջաղես Պէտք է ԿԱՐԴԱԼ Ս. ԳԻՐՅԱԼ \*

Այն հարցը, թէ ինչպէս պէտք է կարդալ և ուսումնասիրել Ս. Գիրյաը, նոյնքան կարեոր է, որքան՝ իւրաքանչիւր գործի յաջողութեան համար կարեոր է սկսելուց առաջ որոշ ծրագիր կազմելը։ Այս խնդրում թէ հաւատացողները և թէ հաւատացողները պէտք է գնան միևնոյն ճանապարհով, եթէ ցանկանում են հասնել իրենց գլխաւոր նպատակին՝ Ս. Գրիգի ընթերցանութեան և ուսումնասիրութեան ձեռնարկելով։

Ի՞նչ է ցանկանում հաւատացողը։ Նա հաւատում է,

\* Եհաղիւեի „Что есть истина“ գրքից։

որ կեանքի Գիրքը բովանդակում է իւր մէջ Աստուածաւ յին արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնը, նորա գլխաւոր նպատակն է ճանաչել կենդանի Աստուածոյ կամքը իւր յաւիտենական և անփոփոխ էութեամբ, նորա համար Աստուածային Յայտնութիւնը պարունակում է իւր մէջ այն ամէնը, ինչ որ ի Հօրէ բղխեալ Ս. Հոգին յայտնել է մարդկանց իրենց հոգեոր դաստիարակութեան և յաւիտենական փրկութեան համար, որպէս զի կարողանան ապրել բանականօրէն՝ համաձայն երկնաւոր Հօր կամքի յաւիտենական արդարութեան։

Հաւատացեալի համար, որին Փրկեչը ուսուցել է երակրպագել Աստուածուն հոգւով և ճշմարտութեամբ, որին յայտնի է Պօղոս առաքեալի ասածը՝ «գիրն սպանանէ», այլ Հոգին կեցուցանէ» (Բ. Կորնթ. Գ. 6), Ս. Գրքի ուսումնասիրութեան գլխաւոր նպատակը պէտք է լինի յայտնութեան յաւիտենական և անփոփոխ հոգու ճանաչողութիւնը՝ զգուշանալով միանդամայն մեռցնող տառին յատուկ հակասութիւններից ու կաշկանդաքից։

Այն հարցերը, թէ երբ, ում ձեռքով և ինչ առթիւ է ասուել Աստուածոյ այս կամ այն խօսքը, հաւատացեալի համար, աստուածային արդարութեան յաւիտենական ճըշմարտութեան նկատմամբ, ոչ մի նշանակութիւն ունենալ չեն կարող նորա համար ամբողջ յայտնութիւնը բղխում է կենդանարար Աստուածոյ Ս. Հոգուց և մի է իւր ամբողջութեամբ, որպէս անփոփոխ Աստուածոյ անփոփոխ խօսք ունի ընդհանուր և յաւիտենական նշանակութիւն, որպէս կենդանի Աստուածոյ անսուտ կամք, որպէս Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութեան երկրաւոր արտացոլումն։

Եւ հէնց այդ ներքին էութիւնը, Աստուածային արդարութեան այդ անփոփոխ յաւիտենական ճշմարտութիւնն է յաւիտենական կեանքի խօսքը, կենդանի ջրի աղբիւրը, որ յաւիտեան յագեցնում է հոգեոր ծարաւը՝ կենդանարար հոգին, որ մենք պէտք է ըմբռնենք մեռցնող տառի ներքոյ։ Ս. Գիրքը կարդալիս մեր գլխաւոր

ջանքը պէտք է լինի շարունակ յիշել, որ յայտնութեան իւրաքանչիւր մի խօսք իւր մէջ բովանդակում է կենդանարար հոգի, որ կեանքի Գրքի ոչ մի երես չի կարող յարաբերական, տեղական և ժամանակաւոր նշանակութիւն ունեցող մեռեալ տառ լինել, այլ որ այդ տառի ներքոյ անշուշտ թաքնուած է ընդհանուր և յաւիտենական նշանակութիւն ունեցող կենդանարար հոգի:

Մենք այնքան հակուած ենք ամէն բանի վերայ նայելու երկրաւոր կեանքի և նրա բովէական շահերի նեղ և ստոր տեսակէտով, որ մեզ համար՝ դիւրութեամբ կամայական մեկնութիւնների ենթարկուող, մեռցնող տառը վտանգաւոր փորձութիւն կարող է լինել՝ ծածկելով իւր տակ կենդանարար հոգին, դիւրութիւն տալով մնալու երկրի վերայ, երբ մեր մէջ ցանկութիւն չկայ վերանալու դէպի Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնը։ Զանանք բոլոր ուժով պաշտպանել մեղ մեռցնող տառի կաշկանդանքից՝ այն ամէնից, ինչ որ կարող է դարձնել մեր ուշադրութիւնը բացարձակից դէպի յարաբերականը, ընդհանուրից դէպի մասնաւորը, մի խօսքով կենդանարար հոգուց դէպի մեռցնող տառը։ Լաւ միտներս պահենք, որ Աստուածային Յայտնութիւնը տրուած է մարդկութեան—ոչ թէ նորահետաքրքրութեանը բաւականութիւն տալու, այլ նորա համար, որ կարողանայ հասկանալ Աստուածային արդարութեան յաւիտենական ճըշմարտութիւնից այն, ինչ որ անհրաժեշտ է երկրաւոր կեանքի խորհուրդը ըմբռնելու և երկրի վերայ Աստուածոյ կամքը բանականօրէն կատարելու համար։

Մեր կողմից մեծ սխալ կը լինէր, եթէ ս. Գրքի մէջ վինտուէինք այն բոլոր հարցերի լուծումը, որ ծագում են մեր անյագ մաքի հետաքրքրութիւնից։ Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնից Աստուած յայտնել է մարդկութեան այն, ինչ որ անհրաժեշտ է երկրաւոր կեանքի խորհուրդը հասկանալու և երկրի վերայ Աստուածոյ կամքը բանականօրէն կատարելու համար։

Ա. Գրքի մէջ չպէտք է որոնենք աստղաբաշխութեան,

երկրաբանութեան, ընագիտութեան կամ մարդակաղմութեան վերաբերեալ այնպիսի հարցերի պատասխան, որոնք ոչ մի նշանակութիւն չունին մարդու երկրային կեանքի խորհուրդը հասկանալու նկատմամբ, և հաւատացած լինենք, թէ այնտեղ կը գտնենք այդ գիտութեանց վերաբերեալ բոլոր հարցերի պատասխանը, որոնք հարկաւոր են երկրաւոր կեանքի նպատակը հասկանալու և բանականօրէն Աստուծոյ կամքը կատարելու համար։

Ս. Գրքի մէջ չպէտք է որոնենք պատմական անցքերի մանրամասն շարակարգութիւն՝ համաձայն «ժամանակակից գիտական մտքի» պահանջների, որոնք հիմնուած են աստիճանաբար զարգացման և մարդու հոգեւոր կեանքի իւր միջավայրից և շրջապատող հանդամանքներից լիովին կախումն ունենալու տեսութեան վերայ։

Ս. Գիրքը, ընդունելով մարդու կամքի ազատութիւնը, շարունակ յիշեցնում է, որ մարդկային կեանքի ուղիղ ընթացքը կախուած է միլիոնաւոր կենդանի, բանական և ազատ էակների անհատական հոգեւոր արժանիքից, և ոչ թէ մի տեսակ հասարակական մեքենայի գործունէութիւնից, որ առանց նպատակի, պատահաբար, այս կամ այն երեսյթն է յառաջ բերում։ Նա չի մոռանում, որ Մովսէս ժամանակակից էր միլիոնաւոր ստոր և չնչին մարդկանց, այն ինչ ոչ միջավայրը և ոչ էլ հանդամանքները չկարողացան ստիպել նորան այնպէս զգալ, մտածել և ապրել, ինչպէս ապրում էին նորա ժամանակակից հրէաներն ու եգիպտացիները։ Ս. Գիրքը չի մոռանում և այն, որ եթէ Սաւուղը կարող է գառնալ Պօղոս առաքեալ, հնարաւոր են և այլ հոգեւոր կերպարանափոխութիւններ՝ հակառակ հոգու աստիճանաբար զարգացման օրէնքի։

Յիշելով այս բոլորը, մենք հեշտութեամբ կը հասկանանք, որ Ս. Գրքի մէջ այն ամէնը, ինչ որ անանց և յաւիտենական նշանակութիւն ունի՝ կազմում է մի ներդաշնակ ամբողջութիւն, այն է՝ նորա կենդանաբար հոգին, և որ Ս. Գրքի այդ կենդանաբար հոգու ներդաշնակութիւնը, թարգմանելով ԺԹ. դարի ինտելիդենցիայի լեզուով՝

արտայայտում է «Ա. Գրքի աշխարհականայեցք, իդեալ և բարոյականութիւն» խօսքերով։

Ա. Գրքի աշխարհականայեցքը մեզ բացատրում է աշխարհի գոյութեան և մարդու երկրաւոր կեանքի խորհուրդը՝ միանգամայն որոշ կերպով պատասխանում է «ի՞նչ է ճշմարտութիւնը» հարցին։

Ա. Գրքի իդեալը կամ առաջնորդող գաղափարը տալիս է մեզ աշխարհի կեանքի նպատակի մասին որոշ հասկացողութիւն և որոշ պատասխան այն հարցին, թէ ինչ է մարդու երկրաւոր կեանքի բանական նպատակը։

Ա. Գրքի բարոյականութիւնը տալիս է մեզ Աստուածային արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնից բղասղ կազմակերպուած մի ծրագիր և կատարելապէս որոշ պատասխան այն հարցին՝ թէ ի՞նչպէս պէտք է բանական և մաքուր կեանք վարել։

Իիւրաքանչիւր հաւատացող, յուսով եմ, կը համաձայնի, որ այս բոլորը նորա համար կեանքի խնդիրներ են և որ առանց գիտակցաբար իւրացնելու այդ ամէնը՝ մենք չենք կարող գիտակցական—քրիստոնէական կեանքով ապրել, չենք կարող գիտակցական մի քայլ անգամ անել ժամանակակից աշխարհային կեանքի խառնաշփոթ լարիւրինթոսի մէջ։

Ի՞նչ է ցանկանում չհաւատացողը մատչելով ս. Գրքի ուսումնասիրութեանը։ Նա գիտէ, որ ս. Գիրքը ճանաչուած է որպէս պետական, հասարակական և մասնաւոր կեանքի հիմք, ուստի և ինքն ոչ մի բանական քայլ չի կարող անել առանց հիմնաւորապէս ուսումնասիրելու պաշտօնապէս իրեւ կեանքի հիմք ընդունուած աշխարհականայեցքը, իդեալը և բարոյականութիւնը, թէկուզ հէնց այն նպատակով, որ կարողանայ գիտակցաբար և բանականօրէն կոռւել իրերի այդ ընդունուած կարգի դէմ։ Նորա համար Ա. Գրքի ներքին էութիւնը միայն նշանակութիւն ունի. հրաժարուելով հաւատալուց յանուն բանականութեան, նա միմիայն յանուն բանականութեան էլ կարող է քննադատել Ա. Գրքը, որպէս պաշտօնապէս ընդու-

նուած կեանքի հիմք, իսկ ս. Գրքի մեռցնող տառը նորա համար աւելի պակաս նշանակութիւն ունի, քան հաւա տացեալի համար։ Հրաժարուելով հաւատալուց յանուն բանականութեան, չհաւատացողը պարտաւոր է ժխտել Ս. Գրքը նոյնպէս յանուն բանականութեան, ոչ միայն որպէս Աստուածային յայտնութիւն, այլ և որպէս պաշտօնապէս ընդունուած կեանքի հիմք, և Ս. Գրքի փոխարէն ընդունել գիտակցաբար աւելի լաւը՝ բանականօրէն ապացուցանելով նորա առաւելութիւնը Ս. Գրքից։

Ամէն մի գործ գժուար է, եթէ սէրը չէ լուսաւորում և ջերմացնում։ Աստուածային յայտնութիւնը իւր ամբողջ ծութեամբ, որպէս նաև կեանքի իւրաքանչիւր մի խօսքը միանդամայն մատչելի և հասկանալի են նոյն իսկ ամենաշ հասարակ և ոչ գրադէտ մարդկանց, եթէ հաւատը բացել է նոցա հոգու աչքերը և եթէ սէրը հասկանալու ընդուա նակ է գարձրել նոցա սրտերը։ Զհաւատացողի համար, ընդհակառակը, Ս. Գրքի կենդանարար հոգին ըմբռնելլ շատ գժուարութիւններ ունի, որոնց յաղթելու համար հազիւ թէ մէկը բաւականաչափ զօրութիւն և եռանդ ցոյց տայ՝ առանց հաւատացեալի օժանդակութեան։

Այս կերպ մատչելով ս. Գրքի ուսումնասիրութեան՝ հաւատացողը հնարաւորութիւն կունենայ ստուգելու, թէ որքան գիտակցական է իւր հաւատը, իսկ չհաւատացողը՝ թէ որքան գիտակցական է իւր անհաւատութիւնը։

#### Մամրեւ վարդապետ

